**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2026 թվականի մարտի 22-28-ը Վրաստան գործուղման արդյունքների մասին**

1. **ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ**

   Յանա Բաբայան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

   Երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Վրաստանի Կախեթի շրջանի Թելավի քաղաք 2026 թվականի մարտի 22-28-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Այցի նպատակն էր խթանել Հայաստանի և Վրաստանի երիտասարդների համագործակցությունը, ամրապնդել բարեկամական հարաբերությունները և հիմք ստեղծել ապագա համատեղ ծրագրերի համար:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 22-28-ը Վրաստանի Կախեթի շրջանի Թելավի քաղաքում մասնակցում է Հայաստանի և Վրաստանի երիտասարդների համար կազմակերպված երիտասարդական ճամբարին: Հայաստանից ճամբարին մասնակցում են ՀՀ մարզերում գործող երիտասարդական կենտրոններ հաճախող ակտիվ երիտասարդներ, ինչպես նաև ՀՀ բուհերի ուսանողներ:

Միջոցառման ընթացքում իրականացվել են առաջնորդության ոչ ֆորմալ կրթության գործիքակազմով դասընթացներ, ինչպես նաև մշակութային և ինտելեկտուալ միջոցառումներ:

## 6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Յանա Բաբայանը միջոցառման ընթացքում մասնակցել է Վրաստանի Հանրապետության երիտասարդական գործակալության ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքային քննարկմանը, ինչպես նաև ներկայացրել ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող երիտասարդներին ուղղված մի շարք ծրագրեր, «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի ընդունման, կիրառման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ՀՀ-ում գործող երիտասարդական կենտրոնների վերաբերյալ ներկայացում, որն իր մեջ ներառում էր երիտասարդական կենտրոնների գործունեության, ուղեցույցերի, տեղաբաշխվածության, մատուցվող ծառայությունների, նպատակների, պայմանների և օրենքով սահմանված երիտասարդական կենտրոնների ավելացման հեռանկարների վերաբերյալ տեղեկատվություն:

Վերոնշյալ տեղեկատվությունը ներկայացվել է հիմք ընդունելով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված ուղեցույցը:

Ինչպես նաև Յանա Բաբայանի կողմից իրականացվել են կազմակերպչական աշխատանքներ՝ երիտասարդների համակարգված մասնակցությունը ապահովելու նպատակով:

**8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ՅԱՆԱ ԲԱԲԱՅԱՆ**

**ԱՄՍԱԹԻՎԸ՝** 30.03.2026թ.